

## ԿԱՐԾԻՔ

### **ՀՀ կառավարության «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման համար անհրաժեշտ նվազագույն չափորոշիչները հաստատելու և ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի թիվ 730-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ**

ՀՀ կառավարության «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման համար անհրաժեշտ նվազագույն չափորոշիչները հաստատելու և ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի թիվ 730-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման նախագծի<sup>1</sup> վերաբերյալ նկատառումները ներկայացվում են ստորև.

1. Նախագծի թիվ 1 հավելվածի 6-րդ կետում նշվում է, որ տուն-ինտերնատը պետք է ունենա հանգստի սենյակներ՝ յուրաքանչյուր 50 խնամվողի հաշվարկով՝ մեկ սենյակ:

Մինչդեռ, նույն հավելվածի 8-րդ կետի համաձայն՝ հանգստի սենյակը պետք է ապահովված լինի բազմոցներով, բազկաթոռներով, սեղաններով, սեղանի խաղերով, աթոռներով՝ առնվազն 20 խնամվողի միաժամանակյա հանգստի և զբաղմունքի համար և առնվազն մեկ հեռուստացույցով:

Այսպես, եթե 50 խնամվողին հատկացվում է մեկ հանգստի սենյակ, որը ապահովված է անհրաժեշտ պարագաներով առնվազն 20 խնամվողի միաժամանակյա հանգստի և զբաղմունքի համար, ապա պարզ չէ, թե ինչպես է կազմակերպվելու միաժամանակ 50 խնամվողի հանգիստը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Նախագծի թիվ 1 հավելվածի 8-րդ կետը համապատասխանեցնել նույն հավելվածի 6-րդ կետի պահանջներին:

2. Նախագծի թիվ 2 հավելվածի աղյուսակի 5-րդ սյունակի վերնագրում նշված է տարբեր տեսակի սննդամթերքի օրական օգտագործման չափը (գրամներով) բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա խնամքի ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատություններում տուն-ինտերնատի խնամվողներին հատկացնելու համար: Մինչդեռ ուղղակիորեն նշված չէ, թե արդյոք նշված սննդամթերքի օրական օգտագործման չափը մեկ անձի հաշվարկով է, թե՛ ոչ:

Բացի այդ, հատուկ (մասնագիտացված) հաստատություններում խնամվում են նաև առողջական խնդիրներ ունեցող անձինք, որոնք հնարավոր է բժշկական ցուցումով պարտավոր են հետևել հատուկ սննդակարգի: Այդ անձանց դեպքում պարզ չէ, թե արդյոք

---

<sup>1</sup> Այսուհետ՝ Նախագիծ

նրանց վրա տարածվելու է մատնանշված աղյուսակում ամրագրված սննդատեսակների նվազագույն օրաբաժինը: Եվ եթե ոչ, ապա՝ ինչ սկզբունքով է կազմվելու տվյալ անձանց սննդի օրաբաժինը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք Նախագծի թիվ 2 հավելվածի աղյուսակում կատարել անհրաժեշտ փոփոխություններ:

3. Նախագծի 5-րդ և 7-րդ հավելվածների վերնագրերը շարադրված են համապատասխանաբար հետևյալ վերտառությամբ. «Նվազագույն չափորոշիչներ *տուն-ինտերնատներում* խնամվողների խնամքի համար անհրաժեշտ սանիտարահիգիենիկ պարագաների և մաքրիչ նյութերի օգտագործման» և «Նվազագույն չափորոշիչներ ընդհանուր տիպի *տուն-ինտերնատում* խնամվողների առողջական վիճակի և ինքնասպասարկման կարողությունների գնահատման հիման վրա մատուցվող ծառայությունների»:

Նշված հավելվածներում օգտագործվում է «տուն-ինտերնատ» եզրույթը, այնինչ Նախագծի մի շարք կետերում (օրինակ՝ կետ 1,2), ինչպես նաև որոշ հավելվածներում և վերջիններիս վերնագրերում (օրինակ՝ հավելված թիվ 1, 2, 4) գործածվում է «*բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա խնամքի ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատություններ (տուն-ինտերնատներ)*» ձևակերպումը: Այս կապակցությամբ նշենք, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն հասկացությունը սահմանելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք Նախագծի թիվ 5 և 7 հավելվածներում և համապատասխան կետերում կատարել անհրաժեշտ փոփոխություններ:

4. Նախագծի թիվ 5 հավելվածի 29-րդ տողում «Չափման միավորը» սյունյակում նշվում է «Հատ», իսկ «Տարեկան պահանջվող քանակը» սյունյակից հետո՝ «150» բառերը: Արդյունքում անհասկանալի է դառնում, թե Նախագծով 1 կնոջ հաշվով ինչ է նախատեսվում 150 հատով: Առաջարկում ենք Նախագծում կատարել համապատասխան փոփոխություն՝ շտկելով նշված տեխնիկական վրիպակը:

5. Նախագծի թիվ 5 հավելվածի 31-րդ տողն ունի հետևյալ վերտառությունը. «Տակդիր /փամփերս/ հատ 730»: Տվյալ դեպքում «Փամփերս» բառն օգտագործելը նպատակահարմար չէ, քանի որ վերջինս ապրանքային նշան է, այլ ոչ թե «տակդիր» տերմինը բացատրող մեկ այլ տերմին:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք Նախագծի թիվ 5 հավելվածի 31-րդ տողից հանել «փամփերս» բառը:

6. Նախագծի թիվ 6 հավելվածի 2-րդ կետում նշվում է, որ տնային խնամք տրամադրող կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) կողմից սպասարկվող անձինք, ըստ իրենց առողջական վիճակի, կենսագործունեության սահմանափակման աստիճանի և սոցիալական պաշտպանության անհրաժեշտության, *բաժանվում են երեք ենթախմբի:*

Առաջարկում ենք նշված կետի՝ «բաժանվում են 3 ենթախմբի» մասը վերաշարադրել «ընդգրկվում են 3 ենթախմբում»:

7. Նախագծի թիվ 6 հավելվածի 7-րդ կետը շարադրված է հետևյալ վերտառությամբ. ««Բ» ենթախմբում ընդգրկվում են ծերության նպաստ ստանալու իրավունքի տարիքին հասած և (կամ) 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող, կողմնակի անձի մասնակի խնամքի կարիք ունեցող, կենսագործունեությունը մասամբ սահմանափակված անձինք»: Մինչդեռ, նույն հավելվածի 8-րդ կետում թվարկվում են «Բ» ենթախմբում ընդգրկված տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական սպասարկման երաշխավորված ծառայությունների տեսակներն ու ծավալները:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք կատարել անհրաժեշտ փոփոխություններ՝ իրար հետ համապատասխանեցնելու թիվ 6 հավելվածի 7 և 8 կետերը:

8. Նախագծի թիվ 7 հավելվածի 9-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ որպես խմանվողներին տրամադրվող ծառայություն՝ շաբաթը մեկ անգամ կազմակերպվում է լոգանք և փոխվում է անկողնային սպիտակեղենը:

Առաջարկում ենք վերը նշված ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Լոգանքը կազմակերպվում և անկողնային սպիտակեղենը փոխվում է շաբաթը մեկ անգամ պարտադիր և *շաբաթվա ընթացքում՝ ըստ անհրաժեշտության:*»:

**ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ**